Հաշվետվություն

2026 թվականի սեպտեմբերի 15-ից 17-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Ռուզաննա Խաչատրյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի օգնական
Արմեն Գրիգորյան, Կադաստրի կոմիտեի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Մոսկվա, սեպտեմբերի 15-ից 17-ը:

3. **Հրավիրող կողմը.**

Ռուսաստանի Դաշնության պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայություն:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Մասնակցություն ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XLVIII նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**

Նիստի օրակարգն ընդգրկում էր հետևյալ հիմնական թեմաները.

- ✓ ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի XLVII նստաշրջանում ընդունված որոշումների կատարումը, ինչպես նաև նախորդ նստաշրջանից հետո ԱՊՀ մասնակից պետությունների քարտեզագրական և գեոդեզիական ծառայությունների իրականացրած գործունեությանը վերաբերող հարցեր,
- ✓ Հերթական նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում Քարտուղարության և միջպետական խորհրդի աշխատանքային խմբերի գործունեության արդյունքները,
- ✓ Մոսկվայի գեոդեզիայի և քարտեզագրության պետական համալսարանի (МИИГАиК)՝ որպես գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման բնագավառում կադրերի պատրաստման համար ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպության գործունեության արդյունքները,

- ✓ Գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի, տարածական տվյալների և երկրատեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների բազային գիտատեխնիկական կազմակերպության («Ռոսկադաստր» հանրային-իրավական ընկերություն) գործունեության արդյունքները,
- ✓ Գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների, երկրատարածական տեխնոլոգիաների, Երկրի հեռահար զոնդավորման, կադաստրային հաշվառման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ոլորտներում ԱՊՀ մասնակից պետությունների միջև մինչև 2030թ. համագործակցության միջպետական ծրագրի նախագծի հաստատման հարցը,
- ✓ ԱՊՀ մասնակից պետությունների տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալի բազային և թեմատիկ տարածական տվյալների միասնական մոդելի համաձայնեցումը,
- ✓ ԱՊՀ մասնակից պետությունների տարածական տվյալների ենթակառուցվածքի հայեցակարգի հաստատման հարցը,
- ✓ Միջպետական խորհրդի հաջորդ նախագահողի ընտրության, Միջպետական խորհրդի XLIX նստաշրջանի ամսաթվի և անցկացման վայրի վերաբերյալ հարցերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման մասնակիցներին ներկայացվեցին Միջպետական խորհրդի նախորդ նստաշրջանին հաջորդող ժամանակահատվածում տարածական տվյալների ոլորտում Կադաստրի կոմիտեի կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն: Միջպետական խորհրդի անդամ պետությունների պատվիրակությունների ղեկավարների, Միջպետական խորհրդի քարտուղարության, «Ռոսկադաստր» հանրային-իրավական ընկերության, Մոսկվայի գեոդեզիայի և քարտեզագրության պետական համալսարանի (МИИГАиК), աշխատանքային խմբերի ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացված նիստի շրջանակում անդրադարձ կատարվեց համապատասխան ոլորտներում իրականացված աշխատանքների ընթացքին, շոշափվեցին առաջիկայում նախատեսված միջոցառումներին վերաբերող հարցեր: Տեղի ունեցավ մտքերի փոխանակում մինչև 2030 թ. գեոդեզիայի, քարտեզագրության, տարածական տվյալների, երկրատարածական տեխնոլոգիաների, Երկրի հեռահար զոնդավորման, կադաստրային հաշվառման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման ոլորտներում ԱՊՀ մասնակից պետությունների միջև համագործակցության միջպետական ծրագրի նախագծի դրույթների վերաբերյալ: Ելնելով առաջիկայում ՀՀ տարածական տվյալների ոլորտը կարգավորող նոր նորմատիվ-իրավական ակտերի (որոնցով կսահմանվի ռեգիոնալ և գլոբալ տարածական տվյալների ենթակառուցվածքների և ՀՀ ազգային տարածական

տվյալների ենթակառուցվածքի ինտեգրման հնարավորությունը) ընդունման անհրաժեշտությունից՝ հայկական կողմը վերահաստատեց իր դիրքորոշումը միջպետական խորհրդի շրջանակում նախաձեռնված ծրագրերին, իրականացվող միջոցառումներին ՀՀ ազգային օրենսդրությանը համապատասխան մասնակցության վերաբերյալ: Քննարկվեցին նաև նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում առցանց միջոցառումների կազմակերպման, անխափան հեռահաղորդակցության ապահովման, ինչպես նաև մասնագետների առավել լայն շրջանակի ներգրավման հետ կապված հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշվեց ԱՊՀ մասնակից պետությունների գեոդեզիայի, քարտեզագրության, կադաստրի և երկրի հեռահար զոնդավորման միջպետական խորհրդի հաջորդ՝ XLIX նստաշրջանն անցկացնել Տաջիկստանի Հանրապետությունում: XLVIII նստաշրջանի արձանագրությունը հայկական կողմը ստորագրեց վերապահումով (արձանագրությամբ նախատեսված միջոցառումների իրականացմանը իր ազգային օրենսդրության համապատասխան մասնակցելու և արձանագրության յուրաքանչյուր կետի իրականացմանը մասնակցություն ապահովելու մասով առանձին որոշում կայացնելու վերաբերյալ):

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ղազախստանի Հանրապետության պատվիրակության ներկայացուցիչների հետ քննարկվեցին ոլորտային համագործակցության ծավալման, լավագույն փորձի փոխանակման վերաբերյալ հարցեր: Մասնավորապես անդրադարձ կատարվեց հայ-ղազախստանյան տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի օրակարգում Կադաստրի կոմիտեի կողմից առաջարկված համագործակցության ուղղությունների ներառմանը և դրանց իրականացման հնարավորություններին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ակտիվացնելու պատասխանատու գերատեսչությունների միջև շփումները մասնագիտական ոլորտներում համագործակցության արդյունավետ իրականացման նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Ռուզաննա Խաչատրյան
Արմեն Գրիգորյան

17.09.2026 թ.